

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշակերտի ինքնագնահատականը և նրա ունեցած դաստիարակչական նշանակությունը

Կատարող՝ Մկրտչյան Քնարիկ Հենրիկի

/անուն, ազգանուն, հայրանուն /

«Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, դասվար

/դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

/անուն, ազգանուն/

Բովանդակություն

Ներածություն.....	3
Աշակերտի ինքնագնահատականը և նրա ունեցած դաստիարակչական նշանակությունը.....	5
Եզրակացություն.....	15
Օգտագործված գրականության ցանկ.....	16

Ներածություն

Կրտսեր դպրոցական տարիքը երեխայի կողմից մարդկային հարաբերությունների աշխարհում սեփական անձը, պահանջումները ընկալելու շրջան է: Դրա համար այս շրջանում հատկապես կարևոր է հիմք ստեղծել ադեկվատ ինքնագնահատականի հետագա ձևավորման համար:

Ինքնագնահատականը այն է, թե ինչպես է մարդը գնահատում իրեն, իր հնարավորությունները, արարքները: Մարդ մի՞թե համեմատում է իրեն ուրիշների հետ և այդ համեմատման հիմքի վրա կարծիք կազմում իր մասին: Այսպես աստիճանաբար ձևավորվում է մարդու ինքնագնահատականը: Ադեկվատ ինքնագնահատականը մարդուն թույլ է տալիս համեմատել սեփական ուժերը տարբեր դժվարության խնդիրների և շրջապատի պահանջների հետ: Ոչ համապատասխան ինքնագնահատականը խեղաթյուրում է ներքին աշխարհը, խանգարում է ներդաշնակ զարգացմանը:

Ինքնքանահատականը սկսում է ձևավորվել վաղ մանկության տարիքից: Մեծահասակների պահանջները այն ժամանակ են դառնում երեխայի վարքի կարգավորողներ, երբ դրանք վերածվում են սեփական անձի նկատմամբ ինքնակարգավորող պահանջների, որոնց երեխան հետևում է անկախ նրանից գտնվում է մեծահասակի հսկողության տակ, թե ոչ: Այդ ժամանակ երեխան դառնում է սեփական վարքի կարգավորողը:

Վարքի ինքնակարգավորման բարդ գործընթացի վերլուծությունը երեխայի մասին բոլոր գիտությունների հիմնական խնդիրն է: Ինքնակարգավորման մեջ է մտնում այն բարդ հոգեկան ապարատը, որն անվանում են ինքնագնահատական: Առանց ինքնագնահատականի վարքը չի կարող լինել ինքնակարգավորվող: Ինքնագնահատականը, ինքնավերահսկումը և վարքի ուղղումն ամուր կապված գործընթացներ են:

Հոգեկան ինքնակարգավորումը միանշանակ հանգեցնում է ինքնագնահատականի, որի հետևանքով և համաձայն որի որոշվում է ոչ միայն որևէ արարք գործելու ցանկությունը, այլև հաջողության մակարդակը:

Յու. Ս. Երոֆևի, Դ. Վ. Երշեվայի, Ե. Ն. Վետոյի հավաստմամբ ինքնագնահատականը կայուն չէ: Այն փոփոխվում է կախված իրավիճակից, դրա

համար շատ էմոցիոնալ խանգարումներ ազդում են ինքնագնահատականի վրա: Կարելի է դա հաղթահարել, բայց դրա համար ծնողները և մանկավարժները պետք է իմանան, թե ինչպես է ձևավորվում ինքնագնահատականը կրտսեր դպրոցական տարիքում և ինչպես նրանք կարող են օգնել երեխային ադեկվատ ինքնագնահատականի ձևավորման հարցում:

Տվյալ աշխատանքի նպատակն է ինքնագնահատականի հասկացության բացահայտումը կրտսեր դպրոցականի մոտ և ինքնագնահատականի վրա ազդող փաստերի բնութագրումը:

Աշխատանքի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել գնահատման ազդեցությունը սովորողի անձի վրա:
2. Պարզել ինքնագնահատականի դաստիարակչական նշանակությունը:

Աշակերտի ինքնագնահատականը և նրա ունեցած դաստիարակչական նշանակությունը

Կրտսեր դպրոցականներն այսօր դրված են զարգացման բոլորովին այլ պայմանների մեջ, քան նրանց հասակակիցները 20-30 տարի առաջ: Հիմնական պատճառներն են՝ ինֆորմատիզացիան, վիրտուալ տիրույթում ազատ հաղորդակցումը, հասարակության անդամների արժեքային համակարգի փոփոխությունները, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը, սոցիալականացման տարաբնույթ գործոնների և սուբյեկտների մեծ թիվը և այլն: Երեխայի վրա հսկայական ազդեցություն են գործում զանգվածային լրատվության տարբեր միջոցները, ինչպես նաև կրոնական դաստիարակությունը: Ժամանակակից կրտսեր դպրոցականը համացանցի տեղեկատվական տիրույթում անցկացնում է բավականին երկար ժամանակ: Դա, անկասկած, նպաստում է նրա տեղեկատվական կոմպետենցիաների զարգացմանը. երեխան, յուրացնելով նորը, ընդլայնում է իր հաղորդակցության շրջանակները, ծանոթանում է տարբեր կարծիքների, ձեռք է բերում տեղեկատվությունը համեմատելու և գնահատելու կարողություններ:

Անձի նորմալ զարգացման համար մեծ նշանակություն ունի մարդու ցանկությունների, նրա հավակնությունների ու ընդունակությունների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը: Ընդունակությունները զարգանում են գործունեության մեջ: Բայց ինդիվիդուալն այն է, թե դրանք համապատասխանում են այն նպատակին, որին ձգտում է մարդը: Այսպես թե այնպես մարդ միշտ գնահատում է իր ընդունակությունները: Մի դեպքում մարդ գերագնահատում է իր հնարավորությունները, ուժերը, մյուս դեպքում ընդհակառակը՝ թերագնահատում է, և մարդը ընդունակ է անհամեմատ ավելի շատին, քան ինքն է կարծում:

Ինքնագնահատականը մարդու վերաբերմունքն է իր ընդունակությունների, հնարավորությունների, անձնային որակների, ինչպես նաև արտաքին տեսքի նկատմամբ: Այն կարող է լինել.

1. Ադեկվատ (ճիշտ, համապատասխան) – երբ մարդու կարծիքն իր մասին համապատասխանուկում է նրան, ինչ ինքն իրենից ներկայացնում է իրականում:
2. Ոչ ադեկվատ – երբ մարդ գնահատում է իրեն ոչ օբյեկտիվ, երբ կարծիքն իր մասին կտրուկ տարբերվում է մյուս մարդկանց կարծիքներից:
3. Ցածր – երբ մարդ չի գնահատում իրեն համապատասխան իր կարողությունների:

Ըստ Ա.Բ. Լիպկինայի, սովորողների ինքնագնահատականի տարիքային դինամիկան որոշվում է ոչ այնքան նրանց օբյեկտիվ հնարավորություններով, որքան ուսուցչի և դասարանի աշակերտների գնահատող ազդեցությունների ազդեցությամբ: Մինևույն ժամանակ, նշվում է, որ կրթական գործունեության մեջ հաջողության կամ ձախողման իրավիճակը, որն ապահովվում է ուսուցչի ցածր կամ բարձր գնահատականներով, անշեղորեն հանգեցնում է սովորողների ձգտումների մակարդակի փոփոխությանը:

Թույլ աշակերտի կամ գերազանց աշակերտի գնահատված դիրքը մինչև չորրորդ դասարան, ըստ Ա.Բ. Լիպկինայի, իրենց գործունեության ընթացքում ձեռք է բերում գլոբալ գործոնի նշանակությունը, որը տարածվում է ուսուցման ամբողջ գործընթացի վրա, ներառյալ սովորողի կողմից գնահատականներ ստանալը:

Բ.Գ. Անանիևը կարծում է, որ ուսուցչի պահանջների տարբեր մակարդակները տարբեր ակադեմիական առաջադիմություն ունեցող ուսանողների համար ձևավորում են նրանց տարբեր մակարդակի ձգտումները: Այսպիսով, իրենց ներկայիս աշխատանքում ուժեղ սովորողները բարձր են գնահատվում ուսուցիչների կողմից և, հետևաբար, ձևավորում են բարձր մակարդակի ձգտումներ՝ շատ հաճախ առաջացնելով սեփական գիտելիքների գերազնահատում և հետագա որակական առաջընթացի ուշացում: Կա նաև կարծիք, որ միանման գնահատականներն օգնում են սոցիալական ընտրության իրականացմանը. «սոցիալականացման հաջողակները» - գերազանց սովորողները- գնում են համալսարաններ, մուտք են գործում հեղինակավոր մասնագիտությունների և պաշտոնների ասպարեզ, ստանում են բարձր աշխատավարձեր, «անհաջողակները» սահում են հասարակության ստորին հատված (հանցագործներ, մուրացկաններ, գործազուրկներ, անօթևաններ): Հաճախ ամեն ինչ սկսվում է դպրոցական գնահատականներից: Միանգամայն հնարավոր է,

որ ուսման մեջ անհաջող սովորողը,ի վերջո,ժամանակի ընթացքում կարող է անհաջողակ դառնալ նաև կյանքում:

Ուսուցչի և աշակերտի միջև արդյունավետ փոխգործակցության պայմաններից մեկը սովորողների մոտ իրատեսական ինքնագնահատականի ձևավորումն է: Իրատեսական գնահատումը պետք է հիմնված լինի նախորդ արդյունքների հետ համեմատության վրա: Երեխայի ցանկացած առաջընթացի համեմատությունն իր նկատմամբ շատ ավելի նպատակահարմար է, քան չափանիշների վրա հիմնված համեմատությունը: Սա աշակերտին փրկում է բացասական հույզերից և ձախողման վախից «լավ ակադեմիական առաջադիմության» համար մրցակցային պայքարում, որը դպրոցական համակարգում դարձել է ինքնագնահատական և հաջողության կարծրատիպ:

Ինչպես բարձր, այնպես էլ ցածր ինքնագնահատականը բարդացնում է մարդու կյանքը: Հարաբերությունների հաստատման և նորմալ շփման համար կարևոր է իմանալ մարդու ինքնագնահատականը:

Շատ կարևոր է քննարկել երեխայի ինքնագնահատականը: Ինչպես ամենը նրա մեջ, ինքնագնահատականը նույնպես նոր է ձևավորվում և մեծահասակների համեմատ, ենթարկվում ազդեցությունների և փոփոխությունների:

Ինքնագնահատականը լինում է երեք տեսակի.

1. բարձր
2. աղեկվատ
3. ցածր

Ցածր ինքնագնահատականի ձևավորման համար գոյություն ունի երկու կարևոր պատճառ.

ա) պայմանավորված է այն համոզմունքներով, արժեքներով, որոնք երեխան վերցնում է ծնողներից: Եթե ծնողները իրենց համարում են ոչ լիարժեք և ուրիշներին ենթարկվող, ապա երեխաները իրենց համարում են անարժան և արդյունքում դառնում են անկարող լուծելու անզամ ամենապարզ խնդիրները, որոնք առաջանում են տանը կամ դպրոցում:

բ) պայմանավորված է դպրոցական տարիներին ունեցած անհաջողություններով և բացթողումներով:

Որպեսզի օգնենք երեխային բարձրացնել ցածր ինքնագնահատականը, պետք է երեխայի մեջ ձևավորել սովորելու, ուսումնական իրական խնդիրը տեսնելու, ինքնուրույն որոշման օպտիմալ միջոցներ գտնելու կարողություն: Դա կարևոր է ոչ միայն ուսումնական, այլև ցանկացած ուրիշ գործունեության մեջ:

Կրտսեր դպրոցականի ուսուցման և դաստիարակության գործընթացներում որոշակի նորմեր ու արժեքներ յուրացնելով ուրիշների գնահատականների ազդեցությունների տակ սկսում է որոշակի ձևով վերաբերվել համ իր իրական արդյունքներին, որոնց նա հասնում է ուսումնական գործունեության ընթացքում, համ էլ իրեն՝ որպես անձի: Տարիքի հետ նա ավելի որոշակի է համեմատում իր իրական ձեռքբերումները և այն ինչ ինքը կարող էր հասնել իր անձնային որակներով: Ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտի մոտ ձևավորվում է սեփական հնարավորությունների գնահատական, որը ինքնագնահատականի հիմնական բաղադրիչներից մեկն է:

Ինքնագնահատականի մեջ արտացոլվում են երեխայի պատկերացումները ինչպես արդեն հասածը, այնպես էլ ապագայի ծրագիրը, որը հնարավոր է թերի է, բայց մեծ դեր է խաղում վարքի ինքնակարգավորման և ուսումնական գործունեության մեջ: Ինքնագնահատականի մեջ արտացոլվում է այն, ինչ երեխան իմանում է իր մասին ուրիշներից, և իր սեփական ակտիվությունը ուղղվում է իր գործողությունների և անձնային որակների ընկալմանը:

Ինքնագնահատականը սերտորեն կապված է երեխայի հավակնությունների հետ:

Երեխայի ինքնագնահատականը բացահայտվում է ոչ միայն իրեն գնահատելով, այլև ուրիշների ձեռքբերումների նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Հետազոտությունները ցույց են տվել, որ բարձր ինքնագնահատականով երեխաները միշտ չէ, որ գովում են իրենց, բայց միշտ մերժում են այն, ինչ անում են մյուս երեխաները: Իսկ ցածր ինքնագնահատականով երեխաները՝ ընդհակառակը՝ միշտ գովաբանում են ընկերների ձեռքբերումները: Երեխաները, ովքեր չեն քննադատում իրենց, հաճախ քննադատում են ուրիշներին: Եթե լավ սովորող աշակերտին տանք իր հինգի աշխատանքը և ուրիշ աշակերտի հինգի աշխատանքն ու ասենք, որ նա գնահատի երկուսն էլ, ապա իրաշխատանքը նա

կգնահատի հինգ, իսկ մյուս աշխատանքի մեջ բազմաթիվ սխալներ կգտնի:

Երեխաները չեն ծնվում իրենց նկատմամբ որոշակի վերաբերմունքով: Ինչպես անձի մյուս առանձնահատկությունները, ինքնագնահատականը նույնպես ձևավորվում է դաստիարակության գործընթացում, որում մեծ դեր են խաղում ընտանիքը և դպրոցը:

Բարձր ինքնագնահատականով երեխաները տարբերվում են ակտիվությամբ և հաջողության հասնելու ձգտումներով ինչպես ուսման և աշխատանքի մեջ, այնպես էլ խաղերում: Բարձր ինքնագնահատականով երեխաներին հաստուկ է հպարտությունը, պճնամոլությունը, ձգտումը ցանկացած գնով ուշադրություն գրավել: Հիվանդագին են տանում քննադատությունը իրենց հասցեին: Միրում են քննադատել ուրիշներին: Հաճախ գերագնահատում են իրենց հնարավորությունները: Հակառակ պատկերն է ցածր ինքնագնահատականով երեխաների մոտ: Նրանց առանձնահատկությունն է անվստահությունը սեփական անձին կատմամբ: Իրենց սկսած բոլոր գործերում նրանք սպասում են անհաջողության:

Պարզվում է, որ ոչ մի կապ չկա երեխայի ինքնագնահատականի և ընտանիքի նյութական ապահովության միջև: Բայց մեծ նշանակություն ունի ընտանիքի ամրությունը: Տարրալուծված ընտանիքի երեխաները ունենում են ցածր ինքնագնահատական:

Մինչև վերջ բացահայտված չէ երեխայի ինքնագնահատականի և ծնողի հետ երեխայի անցկացրած ժամանակի քանակի միջև եղած կապը: Բայց տվյալ պարագայում կարևոր է ոչ թե երեխայի և ծնողի միասին եղած ժամանակը, այլ նրանց միջև եղած շփումը: Կարևոր է ծնողների հետևողական վերաբերմունքը երեխայի անձի, կյանքին կատմամբ, ընկերների, ճաշակի և բնավորության ճանաչումը:

Այն ընտանիքներում, որտեղ դաստիարակվել են բարձր ինքնագնահատականով երեխաներ, ծնողները, որպես կանոն, երեխաներին մասնակից են դարձրել ընտանեկան խնդիրների քննարկմանը, լսել են երեխայի կարծիքը անգամ այն դեպքում, երբ այն չի համապատասխանել իրենց կարծիքին: Լրիվ հակառակ պատկերն է այն ընտանիքներում, որտեղ ապրում են ցածր ինքնագնահատականով երեխաներ: Այս ծնողները երեխաներին ընդգրկում են իրենց կյանք միայն այն ժամանակ, երբ երեխաները նրանց համար որոշակի

դժվարություններ են ստեղծում. ամենից հաճախ արտահայտվում է դպրոց կանչվելով:

Դպրոց գնալով սկսվում է երեխայի կյանքի նոր շրջան. նրա առաջատար գործունեությունը դառնում է ուսումը իր հատուկ ռեժիմով, երեխայի նյարդահոգեբանական մակարդակի և անձնային որակների հատուկ պահանջներով: Այս գործունեության արդյունքները գնահատվում են հատուկ բալերով: Արդեն դա է որոշում երեխայի դեմքը և մյուս մարդկանց մեջ գրաված դիրքը:

Երեխայի ինքնագնահատականը և վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ որոշվում է ուսման մեջ նրա հաջողություններով և անհաջողություններով, ուսուցչի կողմից ստացած գնահատականներով: Հոգեբաններն ու մանկավարժները հատուկ ուսումնասիրում են ուսուցչի գնահատականների ազդեցություններն աշակերտների վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաները, ովքեր ինչ-որ գործունեություն են ծավալում, իրենց նկատմամբ որոշակի վերաբերմունքի կարիք ունեն, պահանջմունք են զգում գնահատվելու կատարած աշխատանքի դիմաց:

Ամենից շատ խրախուսվելու և բարձր գնահատվելու կարիք ունեն: Շատ հիասթափվում են ցածր գնահատականներից: Ամենից հաճախ երեխայի մեջ աշխատելու ցանկությունը սպանում է անտարբերությունը, երբ երեխայի ջանքերը անտեսում և չեն նկատում:

Ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտների մոտ աստիճանաբար սկսում է ձևավորվել պահանջկոտություն և քննադատական վերաբերմունք սեփական անձի նկատմամբ:

Առաջին դասարանցիները գերազանցապես բարձր են գնահատում իրենց ուսումնական գործունեությունը, իսկ անհաջողությունները կապում են միայն օբյեկտիվ հանգամանքների հետ:

Երկրորդ դասարանցիների և հատկապես երրորդ դասարանցիների վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ արդեն ավելի քննադատական է. նրանց համար գնահատման առարկա են ոչ միայն լավ, այլև վատ արարքները, ոչ միայն հաջողությունները, այլև անհաջողությունները ուսումնական գործունեության մեջ: Աստիճանաբար մեծանում է նաև ինքնագնահատականների ինքնուրույնությունը:

Եթե առաջին դասարանի աշակերտների ինքնագնահատականը համարյա ամբողջությամբ կախված է ուսուցչի և ծնողների կողմից վարքի և ուսման մեջ ստացած գնահատականներից, ապա երկրորդ և երրորդ դասարանի աշակերտները գնահատում են իրենց ձեռքբերումները ավելի ինքնուրույն՝ քննադատական գնահատման առարկա դարձնելով նաև ուսուցչի գնահատող գործունեությունը (միջոց էմ արդյոք ես ճիշտ, օբյեկտիվ էմ ես արդյոք): Արդեն տարրական դասարաններից սկսած գնահատականի իմաստը աշակերտի համար փոխվում է. դրա հետ մեկտեղ նա կապի մեջ է ուսման իր շարժառիթների, պահանջների հետ, որոնք աշակերտը ինքն է իր առաջ դնում:

Ձեռքբերումների գնահատականի նկատմամբ երեխայի ունեցած վերաբերմունքը ավելի ու ավելի է կապվում ինքն իր մասին ավելի հստակ պատկերացումներ ունենալու պահանջմունքի հետ: Գնահատելով գիտելիքները ուսուցիչը միաժամանակ գնահատում է և՛ անձին, և՛ նրա հնարավորությունները, և՛ տեղը մյուսների մեջ: Հենց այսպես են ընկալում ուսուցչի գնահատականները երեխաները: Հենվելով ուսուցչի գնահատականների վրա երեխաները իրենք են աստիճանավորում իրենց և իրենց ընկերներին, ինչպես գերազանցիկներ, միջակներ, թույլեր, աշխատասերներ և ոչ աշխատասերներ, պարտաճանաչներ և ոչ պարտաճանաչներ, կարգապահներ և ոչ կարգապահներ:

Ուսուցչի գնահատականի ազդեցությունը երեխայի անձի զարգացման, ուրիշների նկատմամբ նրա վերաբերմունքի և ուրիշների իր նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը դժվար է գնահատել:

Գնահատականները, որ դնում է ուսուցիչը, անպայման պետք է համապատասխանեն երեխայի գիտելիքներին: Մանկավարժական փորձը ցույց է տվել, որ երեխային ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է մեծ մանկավարժական տակտ: Կարևոր է ոչ միայն այն, թե ինչ է գնահատում ուսուցիչը, այլև այն, թե ինչ է նա ասում աշակերտին: Երեխան պետք է իմանա, թե ինչ է ուսուցիչը սպասում իրենից հաջորդ անգամ: Պետք չէ շատ խրախուսել լավ սովորող աշակերտներին, հատկապես նրանց, ովքեր բարձր արդյունքների են հասնում համարյա առանց ջանք գործադրելու: Դրան հակառակ պետք է միշտ խրախուսել թեկուզ շատ քիչ արդյունքի հասած աշխատասեր աշակերտներին:

Ժամանակակից դպրոցներում գնահատվում է նորմերին ու կանոններին հետևելը, ճիշտ պատասխանելը և լավ առաջադիմությունը: Շնորհալի երեխաները դպրոցում հաճախ ճնշում են զգում իրենց վրա: Այն հանգամանքը, որ ինքը նման չէ մյուսներին, հաճախ ընդունակ աշակերտին հանում է հավասարակշռությունից: Արդյունքում երեխան նկատում է, որ իրեն չեն գնահատում այնպես ինչպես մյուսներին և ծագում է օտարման զգացում: Մեծ ընդունակություններ ունեցող երեխաները նմանատիպ իրավիճակներում սկսում են թաքցնել իրենց իրական ընդունակությունները:

Եթե երեխան զգա, որ շրջապատողները հավատում են իր ընդունակություններին, ընդունում են իրեն որպես ձևավորվող անձ, դա կնպաստի նրա դրական ինքնաընկալմանը և ինքնաձրավորմանը: Երեխան կսկսի ռեալ գնահատել իր հնարավորությունները, կտեսնի իր գործողությունների վերջնական արդյունքները:

Երեխայի գործողությունների հաջողությունների համար անհրաժեշտ է աջակցություն և բարենպաստ միջավայր: Բայց գործողության գնահատականները պետք է լինեն իրական, օբյեկտիվ: Երեխայի օպտիմալ ինքնագնահատման ձևավորման համար մեծ նշանակություն ունի երեխայի և մեծահասակի արդյունարար համագործակցությունը: Տվյալ փաստը տանում է դեպի արդյունարար գործունեության, ստեղծում է բարենպաստ հիմք անձնային առանձնահատկությունների զարգացման համար:

Ինքնագնահատականի տարբեր մակարդակներ ունեցող երեխաները տարբերվում են անձնային որակներով:

Կրտսեր դպրոցականը, ում հատուկ է ադեկվատ ինքնագնահատականը, ակտիվ է, ուրախ, հումորի զգացումով: Նորմալ է վերաբերվում քննադատմանը:

Ցածր ինքնագնահատականը տանում է հոռետեսական վերաբերմունքի շրջապատի և սեփական անձի նկատմամբ: Երեխաները պասիվ են, շատ զգացմունքային, փակ շրջապատի համար: Քննադատությունը կարող է բերել տրված որակների ավելի խորացման:

Շնորհալի երեխաների ինքնագնահատականը միտում ունի կտրուկ փոփոխությունների՝ կախված չնչին անհաջողություններից: Շատ

պահանջկոտությունը սեփական անձի նկատմամբ, ձգտունը ամեն ինչ կատարելության հասցնել, ծնողներին չհիասթափեցնելու ցանկությունը կարող են պատճառ հանդիսանալ ինքնաստորացման և ինքնամերժման համար:

Փաստերը, որոնք կարող են նմանատիպ ազդեցություն ունենալ շնորհալի երեխաների վրա հետևյալն են.

- անբավարարվածության զգացում, երբ ձեռքբերումները քիչ են լինում սպասումներից,
- իր նկատմամբ քննադատական վերաբերմունք, շրջապատի պահանջներին չհամապատասխանելու զգացում, մյուսների սպասումները չարդարացնելու վախ,
- բարձր զգացմունքայնություն, չնչին անհաջողությունները աղեկվատ ընդունելու անկարողություն,
- դպրոցական ուսուցմանն հաջողության պատասխան ռեակցիա (հայտնի է, որ բարձր ստեղծագործական և ինտելեկտուալ շնորհը կարող է համադրվել ցածր առաջադիմության հետ),
- շնորհալի երեխայի՝ մանկական կոլեկտիվ ներգրավվելու օբյեկտիվ և սուբյեկտիվ բարդություններ,
- ինտելեկտուալ զարգացման և շարժողական հմտության զարգացմանն համատեղություն:

Խորհուրդներ այն ծնողներին, ովքեր հետաքրքրված են իրենց երեխաների աղեկվատ ինքնագնահատականի ձևավորմամբ.

- Պետք չէ ազատել երեխաներին ամենօրյա գործերից, պետք չէ լուծել նրանց խնդիրները, բայց պետք էլ չէ ծանրաբեռնել նրանց:
- Պետք չէ շատ գովել երեխաներին, բայց պետք էլ չէ մոռանալ խրախուսել նրան, երբ նա դրան արժանի է:
- Պետք է միշտ խրախուսել երեխայի նախաձեռնությունները և օգնել դրանք իրագործելու հարցում:

- Պետք է չմոռանալ, որ երեխան ամեն հարցում ուշադիր հետևում է ծնողին: Ծնողները իրենց պահվածքով հաջողությունների և անհաջողությունների նկատմամբ պետք է ցույց տան ադեկվատ վերաբերմունք:
- Պետք չէ երեխաներին համեմատել ուրիշ երեխաների հետ: Համեմատությունը պետք է լինի հենց իր հետ (ինչպիսին էր նա երեկ, ինչպիսին է այսօր):
- Պետք չէ վախենալ անկեղծ սիրել երեխային և ցույց տալ այդ սերը:

Կարևոր է նաև երեխային օգնել ինքնադրսևորվել, այն բնագավառում ցուցադրել իր հնարավորությունները, որտեղ նա ունեցել է որոշակի հաջողություններ:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ինքնագնահատականը բարդ անձնային կառույց է: Այն անձնավորության ձևավորման ամենակարևոր փաստերից է: Աղեկվատ ինքնագնահատականի ձևավորումը հիմք է, որի վրա պետք է կառուցվի մարդու ողջ կյանքը: Այդ իսկ պատճառով շատ մանկավարժների կարծիքով ինքնագնահատականի ձևավորման վրա հատկապես ուշադրություն պետք է դարձնել կրտսեր դպրոցական տարիքում:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականը բնութագրվում է երեխայի սեփական ակտիվության արտացոլմամբ, նրա ինտելեկտուալ հնարավորություններով, դժվարություններ հաղթահարելու կարողություններով: Դա արտահայտվում է աշակերտի պահվածքով ինչպես ուսումնական գործունեության մեջ, այնպես էլ սոցիալական ադապտացիայով:

Կրտսեր դպրոցականների ինքնագնահատականը մասամբ ձևավորվում է արդյունքների հիման վրա. Բուն գործողությունը և դրան նախորդող փուլերը չեն արտացոլվում նրանում: Նշանակում է պետք է երեխային սովորեցնել ցանկացած պահին վերահսկել իր գործողությունները, դրանք ճիշտ գնահատել, ուշադիր լինել սեփական աշխատանքի ամեն մի շրջափուլին, դրա միջանկյալ արդյունքներին:

Անընդունակ երեխաներ չկան. յուրաքանչյուրը ինչ-որ բանի նկատմամբ հակում ունի: Ծնողները և մանկավարժները պետք է նպաստեն, որ երեխան իր լավ կողմերով ներկայանա բոլորին:

Ինքնագնահատականը, որը հանդիսանում է երեխայի գործողությունների իրական կարգավորողը, նաև կարելի է ձևավորել որոշակի պայմաններում: Դա հնարավոր է անել միայն այն դեպքում, երբ ճիշտ է կազմակերպված երեխայի ինքնագործունեությունը:

Ուսումնական գործունեություն կազմակերպելով՝ ուսուցիչը պետք է գիտակցորեն և գիտակցորեն և նպատակաուղղված կերպով ձևավորի աշակերտների ինքնագնահատականը: Ծնողները պետք է երեխաներին հնարավորություն տան անելու այն, ինչով նրանք հպարտանում են: Բայց ամենից ավելի կարևոր է, որ ծնողն ինքը լինի ինքնավստահ և հավատա իր հաջողություններին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բրուտյան Վաչիկ, Կրտսեր դպրոցականների դաստիարակության ժամանակակից խնդիրները, <<Մխիթար Գոշ>>, Գիտամեթոդական հոդվածներ, 2019.1, էջ 4-13
2. Մազմանյան Մ., «Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր», Եր., 1975թ., 216 էջ.
3. Подласый и.П. Педагогика: Новый курс: Кн.1: Учебник для студ. Пед. Вузов. –м.: Владос, 2000. – 256 с.
4. <https://editprint.am/>
5. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/mxitargosh/2019\(1\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/mxitargosh/2019(1).pdf)
6. <https://travelerscoffee.ru/hy/when-that-can-be-planted/samoocenka-v-doshkolnom-vozhraze-statya-samoocenka-u-detei/>